ՄԵԿ ԱՐԵՆԱ • ՄԵԿ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՈՒՂԻ

ARMENIAN DARTS AMATEUR OPEN 2026 organized by Darts Arena

Դարթսի Հայաստանի սիրողական բաց առաջնություն 2026 — մասնակիցներ և վիճակահանություն

Armenian Darts Amateur Open 2026 · Ամսաթիվ՝ 01 / 10 / 2026 - 01 / 11 / 2026

Բովանդակություն

1. Արտոնյալ տեղեր — 2-րդ փուլից 1
2. 1-ին փուլ — վարկանիշ ունեցող մասնակիցներ 2
3. 1-ին փուլ — վիճակահանությամբ 2
4. 1-ին փուլ — կառուցվածք 301) 2
5. 1-ին փուլ — տեղերը խմբերում 3
6. Վիճակահանության կարգը 3
7. 2-րդ փուլ — խմբային (501) 3
8. 3-րդ փուլ — եզրափակիչ (501) 4
9. Տեղերը և հավասարությունը 4

Նախապես հրապարակված կանոնակարգի համաձայն՝ առաջնության հայտերի ընդունումն ավարտվել է **2026 թ. հոկտեմբերի 15-ին, ժամը 23:59-ին**: Ներկայացվել է **28 հայտ**:

Darts Arena-ի ակումբային վարկանիշի **առաջին ութ տեղերի բոլոր տերերը** հայտ են ներկայացրել և առաջնությանը միանում են **2-րդ փուլից**: Մնացած **20 մասնակիցը** խաղում են **1-ին փուլը**:

1. Արտոնյալ տեղեր — 2-րդ փուլից

Ըստ կանոնակարգի 2.2–2.3 կետերի՝ ակումբային վարկանիշի առաջին ութ տեղերը ազատում են 1-ին փուլից:

— **1.** Գոռ Հովհաննիսյան — 368,5 միավոր
— **2.** Արմեն Հարությունյան — 312 միավոր
— **3.** Արտակ Հունանյան — 309 միավոր
— **4.** Պավել Պանտյուխով — 279 միավոր
— **5.** Գարիկ Աթանեսյան — 198,5 միավոր
— **6.** Ալիկ Աղաբաբյան — 172,5 միավոր
— **7.** Կարեն Թորոսյան — 122,5 միավոր
— **8.** Արման Պլուզյան — 121 միավոր

2. 1-ին փուլ — վարկանիշ ունեցող մասնակիցներ

Ըստ կանոնակարգի 2.5 կետի՝ վարկանիշ ունեցող մյուս մասնակիցները խաղում են 1-ին փուլը և մեկնարկային համար ստանում ըստ վարկանիշի:

— Արտակ Ղարիբյան — վարկանիշում **10-րդ տեղ** (95,5)
— Արեգ Կարապետյան — **11-րդ տեղ** (95)
— Էրիկ Աթանեսյան — **12-րդ տեղ** (72)
— Դավիթ Շահինյան — **13-րդ տեղ** (71,5)
— Դավիթ Չաքչյան — **15-րդ տեղ** (38,5)
— Խաչատուր Մելքոնյան — **16-րդ տեղ** (35,5)
— Ռուսլան Կառաչ — **19-րդ տեղ** (21,5)
— Տիգրան Կարապետյան — **23-րդ տեղ** (11,5) · 2025 թ. առաջնության չեմպիոն
— Սուրեն Գրիգորյան — **23-րդ տեղ** (11,5)
— Արամ Հարությունյան — **28-րդ տեղ** (7,5)

Ըստ 2.7 կետի՝ 2025 թ. առաջնության մրցանակակիր **Վլադ Սարուխանյանը** (2-րդ տեղ) ստանում է նույն մեկնարկային կարգավիճակը, ինչ վարկանիշ ունեցող մասնակիցները: 2025 թ. մրցանակակիրները բաժանվում են տարբեր խմբերի:

3. 1-ին փուլ — վիճակահանությամբ

Ըստ կանոնակարգի 2.6 կետի՝ Darts Arena-ի վարկանիշ չունեցող մասնակիցները խմբերում բաշխվում են **բաց վիճակահանությամբ**՝

— Սևակ Մուրադյան
— Գևորգ Ղազարյան
— Սուրեն Մովսիսյան
— Սասուն Թամրազյան
— Արմեն Ոսկանյան
— Հովհաննես Եղյան
— Էդուարդ Քալանթարյան
— Արեգ Հովսեփյան
— Հրանտ Օթիկյան

4. 1-ին փուլ — կառուցվածք (հոկտեմբերի 21, 301)

— 20 մասնակից՝ **2 խումբ՝ 10-ական**, յուրաքանչյուր խումբ՝ **2 ենթախումբ՝ 5-ական**: Խմբերը խաղում են առավոտյան և երեկոյան խաղային բլոկներում:

— Ենթախմբում յուրաքանչյուրը խաղում է բոլորի դեմ՝ **4 հանդիպում**, մինչև **3 հաղթանակ**: Ենթախմբի 5-րդ տեղը դուրս է մնում:

— Խմբային փլեյ-օֆֆ՝ 8 մասնակից (յուրաքանչյուր ենթախմբից առաջին չորսը): Քառորդեզրափակիչներ՝ **A1–B4, A2–B3, A3–B2, A4–B1** (A1՝ ենթախումբ A-ի 1-ին տեղ և այլն), մինչև **3**: Կիսաեզրափակիչներ՝ մինչև **3**: Խմբի եզրափակիչ՝ մինչև **4**: Կիսաեզրափակիչում պարտվածները խաղում են **3-րդ տեղի համար**՝ մինչև **3**:

— Յուրաքանչյուր խմբից քառորդեզրափակիչների **4 հաղթողներն անցնում են 2-րդ փուլ**՝ ընդհանուր **8 մասնակից**:

— Կիսաեզրափակիչը, խմբի եզրափակիչը և 3-րդ տեղի խաղը պարտադիր են. դրանք որոշում են 2-րդ փուլի մեկնարկային համարը՝ **Q1–Q8**: **Q1, Q2**՝ խմբերի եզրափակիչների հաղթողներ, **Q3, Q4**՝ եզրափակիչում պարտվածներ, **Q5, Q6**՝ 3-րդ տեղի խաղի հաղթողներ, **Q7, Q8**՝ 3-րդ տեղի խաղում պարտվածներ: Յուրաքանչյուր զույգում փոքր համարը ստանում է 1-ին փուլում ավելի լավ ցուցանիշներ ունեցողը (10-րդ բաժին):

— Խմբերի վերջին տուրերը խաղացվում են **միաժամանակ**:

5. 1-ին փուլ — տեղերը խմբերում

Տեղի համարը (1–10) վիճակահանության համար է, ոչ թե աղյուսակի տեղ. 1–5՝ ենթախումբ A, 6–10՝ ենթախումբ B:

Խումբ 1 · ենթախումբ A

1 — Արտակ Ղարիբյան · 2 — Տիգրան Կարապետյան · 3 — Սուրեն Գրիգորյան · 4 — վիճակ № 5 · 5 — վիճակ № 6

Խումբ 1 · ենթախումբ B

6 — Դավիթ Շահինյան · 7 — Դ. Չաքչյան կամ Խ. Մելքոնյան (վիճակ) · 8 — վիճակ № 1 · 9 —վիճակ № 2 · 10 — վիճակ № 9

Խումբ 2 · ենթախումբ A

1 — Արեգ Կարապետյան · 2 — Ռուսլան Կառաչ · 3 — Արամ Հարությունյան · 4 — վիճակ № 4 · 5 — վիճակ № 7

Խումբ 2 · ենթախումբ B

6 — Էրիկ Աթանեսյան · 7 — Դ. Չաքչյան կամ Խ. Մելքոնյան (վիճակ) · 8 — Վլադ Սարուխանյան · 9 — վիճակ № 3 · 10 — վիճակ № 8

6. Վիճակահանության կարգը

Քայլ 1. Վիճակ-ն Դավիթ Չաքչյանի և Խաչատուր Մելքոնյանի միջև. առաջինը՝ Խումբ 1, տեղ 7, երկրորդը՝
Խումբ 2, տեղ 7:

Քայլ 2. Վարկանիշ չունեցող 9 մասնակիցների անունները հանվում են մեկ առ մեկ. առաջին հանվածը զբաղեցնում է «վիճակ-ն № 1» տեղը, երկրորդը՝ «№ 2» և այդպես մինչև իններորդը՝

— № 1 — Խումբ 1, տեղ 8 · № 2 — Խումբ 1, տեղ 9 · № 3 — Խումբ 2, տեղ 9

— № 4 — Խումբ 2, տեղ 4 · № 5 — Խումբ 1, տեղ 4 · № 6 — Խումբ 1, տեղ 5

— № 7 — Խումբ 2, տեղ 5 · № 8 — Խումբ 2, տեղ 10 · № 9 — Խումբ 1, տեղ 10

Վիճակահանությունը բաց է և հրապարակվում է մինչև 1-ին փուլը. այնուհետև չի փոխվում (5.5):

7. 2-րդ փուլ — խմբային (501)

16 մասնակից՝ արտոնյալ ութը և 1-ին փուլից անցած ութը (Q1–Q8), **4 խումբ՝ 4-ական**: Սկզբունքը՝ **ուժեղին՝ թույլ**. վարկանիշի առաջատարի խմբում են 1-ին փուլից անցածների ամենացածր համարները:

— **Խումբ A** — Գոռ Հովհաննիսյան, Արման Պլուզյան, Q4, Q8

— **Խումբ B** — Արմեն Հարությունյան, Կարեն Թորոսյան, Q3, Q7

— **Խումբ C** — Արտակ Հունանյան, Ալիկ Աղաբաբյան, Q2, Q6

— **Խումբ D** — Պավել Պանտյուխով, Գարիկ Աթանեսյան, Q1, Q5

Եթե 1-ին փուլի նույն խմբից երկու անցած հայտնվում են 2-րդ փուլի նույն խմբում, երկրորդը տեղափոխվում է հարևան համարի հետ (Q5↔Q6, Q7↔Q8):

— Խմբում յուրաքանչյուրը խաղում է բոլորի դեմ՝ **3 հանդիպում**, մինչև **3 հաղթանակ**:
— Չորս խմբերը յուրաքանչյուր տուրը խաղում են **միաժամանակ**՝ 8 հանդիպում 8 թիրախի վրա:
— Յուրաքանչյուր խմբից **առաջին երկուսը** անցնում են եզրափակիչ փուլ:

8. 3-րդ փուլ — եզրափակիչ (501)

— Քառորդ եզրափակիչներ (մինչև **4**)՝ **ՔԵ1**՝ A1–B2 · **ՔԵ2**՝ C1–D2 · **ՔԵ3**՝ B1–A2 · **ՔԵ4**՝ D1–C2
— Կիսաեզրափակիչներ (մինչև **4**)՝ ՔԵ1 հաղթող – ՔԵ2 հաղթող · ՔԵ3 հաղթող – ՔԵ4 հաղթող
— 3-րդ տեղի խաղ՝ մինչև **4** ·
— Առաջնության եզրափակիչ՝ մինչև **6**

A և B խմբերի հաղթողները գտնվում են ցանցի տարբեր կեսերում. նույն խմբի երկու մասնակից կարող են հանդիպել միայն եզրափակիչում: Ցանցը չի փոխվում (7.4):

9. Տեղերը և հավասարությունը

Խմբում և ենթախմբում տեղերը որոշվում են ըստ կանոնակարգի 10-րդ բաժնի՝ հաղթանակների թվով, լեգերի տարբերությամբ, շահած լեգերի թվով, ապա՝ անձնական հանդիպմամբ. երեք և ավելի հավասարների դեպքում՝ ինը նետումով: